

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-133

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԳՅՈՒՄՐՈՒ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ՓԲԸ-Ի

(իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

առողջապահության նախարարությունը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականություններ կատարող՝ Վահե Հակոբյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ-ն (լիցենզիա*)

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Վալերիկ Շիրինյանի, որը գործում է Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրանային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /Ձև N HP-011/ և /Ձև N SC-011/) պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաքանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

* Կ-XX-000127 տրված 20/06/2003թ-ին:

2.2.3. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.4. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալական խմբերի և այն հիվանդությունների ցանկերի, որոնց դեպքում դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով, Նախարարի հրամաններով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի», հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկերի և սահմանված արտոնությունների մասին,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար Բուժօգնություն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մասով ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.12. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.13. ապահովել հետևյալ տվյալների մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝

2.2.13.1. բժշկական և վարչական անձնակազմի անհատական և կոնտակտային տվյալներ,

2.2.13.2. անձնակազմի պաշտոնների և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.3. բժշկական անձնակազմի աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.4. բժշկական կազմակերպությունում առկա բժշկական սարքավորումների վերաբերյալ տվյալներ,

2.2.13.5. բժշկական կազմակերպության տվյալները (այդ թվում՝ անվանում, հեռախոս, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատուի վերաբերյալ անհատական տվյալներ և այլն),

2.2.13.6. բժշկական կազմակերպության ղեկավարի անհատական և կոնտակտային տվյալները,

2.2.13.7. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բոլոր բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ նաև առանձին դեպքերով չֆինանսավորվող այցերի մասով)՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում սահմանված ձևի,

- 2.2.13.8. այլ տվյալներ՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալներ,
- 2.2.14. ապահովել սույն պայմանագրի 2.2.13. կետում նշված յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- 2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը,
- 2.2.16. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է կրում պատասխանատվություն,
- 2.2.17. նախքան դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,
- 2.2.18. պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
- 2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
- 2.2.20. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,
- 2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,
- 2.2.22. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին,
- 2.2.23. սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված՝ 200,0 մլն ՀՀ դրամը գերազանցող կազմակերպությունը մինչև օգոստոսի 31-ը ապահովում է անկախ աուդիտորի կողմից հաստատված նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն: Ընդ որում, սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված 1000,0 մլն դրամը գերազանցող կազմակերպությունների կողմից ընտրված աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի սույն պայմանագրի հավելված 6-ով նախատեսված պայմաններին,
- 2.2.24. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց Բուժօգնության համար քվոտաների շրջանակներում տրամադրված ուղեգրերի վերաբերյալ հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպությունները Նախարարի կողմից սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն առողջապահության նախարարություն,
- 2.2.25. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.2.26. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

2.3.1. սույն պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.2. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են Նախարարի հրամանով,

2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված՝

2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,

2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը,

2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում,

2.3.5. առողջության առաջնային պահպանում իրականացնող կազմակերպություններում Նախարարի կողմից սահմանված Բուժօգնության որակի չափանիշները և ցուցանիշները չհապահովելու դեպքում Կատարողի կողմից կատարված փաստացի աշխատանքների ծավալներում իրականացնել նվազեցումներ Նախարարի կողմից սահմանված կարգով,

2.3.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.6.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,

2.3.6.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

2.3.7. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

2.3.8. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

2.3.8.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

2.3.8.2. խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները,

2.3.9. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի^{է7} և տուգանքների վճարում,

2.3.10. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,

2.3.11. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է.

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը,

2.4.5. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում ուղարկման ամսաթիվը),

2.4.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից,

2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է՝

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիրատուկանների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,

3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև՝

4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքարված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների կամ ոչ արժանահավատ դեպքերի թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,

4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով,

- 4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով,
- 4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար,
- 4.6. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,
- 4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,
- 4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,
- 4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

- 6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը,
- 6.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.8. և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,
- 6.3. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,
- 6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2019 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2019թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն

ԿԱՏԱՐՈՂ

Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Հասցե ք.Գյումրի Վ.Սարգսյան 25ա

Սպասարկող ԳՆ գործառնական վարչություն
բանկ

Սպասարկող Հայէկոնոմբանկ ԲԲԸ
բանկ

Բանկային 900011105013

Բանկային 163128117476

հաշիվ
ՀՎՀՀ 02507171

հաշիվ
ՀՎՀՀ 05502356

ԱՆ գլխավոր քարտուղարի պարտականություններ
կատարող՝
Վահե Հակոբյան

Տնօրեն՝

Վալերիկ Շիրինյան

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37460808003

Ֆաքս:

E-mail: info@moh.am

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37494533055

Ֆաքս:

E-mail: oncodisp@oncodisp.am

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՈՒՌՈՒՑՔԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ՓԲԸ

(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը)

Ծառայության կոդը	Բժշկական օգնության և սպասարկման տեսակը և ծառայությունը	Չափման միավորը	Գին	Միավորի օրական գինը (դրամ)
1.2	Բժշկական ընդհանուր պրակտիկա			
0711019	Ուռուցքաբանական դիսպանսեր բուժօգնություն դիսպանսերներում	ԱՆՁ	0.3013	
0711228	Ուռուցքաբանական դիսպանսեր ծառայության լաբորատոր-գործիքային հետազոտությունների համար (ներառյալ կցագրված տարածքի բնակչության համար իրականացվող)/ՀՀ մարզեր	ԱՆՁ	0.2739	
3.1	Ուռուցքաբանական			
0301200	Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված առաջնակի հիվանդների հետազոտում՝ ախտորոշման նպատակով ցերեկային ստացիոնարում (ուռուցքաբան.) /մեծ/	ԱխՏՈՐՈՇՈՒՄ	16350	
0301203	Զարորակ նորագոյացությունների ճառագայթ. բուժում ճառագայթային բաժանմունքում /մեծ/	ՍԵԱՆԱ	71000	3550
0301204	Զարորակ նորագոյացությունների բժմ.-թեր. բուժում (առանց բիոխթերապևտիկ դեղամիջոցների ծախսի)/մեծ/	ԴԵՊԵ	120700	
0301205	Զարորակ նորագոյացությունների սիմպտոմատիկ բուժում /մեծ/	ԴԵՊԵ	107900	
0301208	Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված առաջնակի հիվանդների հետազոտում՝ ախտորոշման նպատակով հիվանդանոցային պայմաններում (ուռուցքաբան.)/մեծ /	ԱխՏՈՐՈՇՈՒՄ	38900	
0301210	Զարորակ նորագոյացությունների բժմ.-թեր. բուժում (առանց բիոխթերապևտիկ դեղամիջոցների ծախսի) /ցեր. ստաց./ (մեծ)	ԴԵՊԵ	71000	
0301214	Զարորակ նորագոյացությունների սիմպտոմատիկ բուժում /ցեր. ստաց./ /մեծ./	ԴԵՊԵ	43160	
0301218	Զարորակ նորագոյաց. ճառագայթային բուժում՝ ռադիոգին. բաժանմունքում (մեծ)	ՍԵԱՆԱ	90000	
0709001	Բուժփնիսարկի կողմից ձեռք բերված բիոխթերապևտիկ դեղամիջոցի փաստացի ծախս (դրամ)	ԴՐԱՄ	1	
1100008	Առաջնակի հիվանդների հետազոտություն հիվանդանոցային պայմաններում՝ ախտորոշման ճշտման նպատակով (ուռուցքաբանական ծառայություններում)	ԴԵՊԵ	50000	20000
1100009	Առաջնակի հիվանդների հետազոտություն հիվանդանոցային պայմաններում՝ ախտորոշման ճշտման նպատակով ցերեկային ստացիոնարի պայմաններում (ուռուցքաբանական ծառայություններում)	ԴԵՊԵ	20000	8000
1100200	Նորագոյացությունների ճառագայթային բուժում (1 սեսանի գինը)՝ տարեկան ոչ ավելի, քան 35 սեսանը	ՍԵԱՆԱ	8000	
1100201	Նորագոյացությունների ներխուժողային ճառագայթային բուժում (1 սեսանի գինը)՝ տարեկան ոչ ավելի, քան 10 սեսանը	ՍԵԱՆԱ	18800	
1810000	Պնևմոնկոտմիա	ԴԵՊԵ	450000	
1810001	Բիլորեկտոմիա	ԴԵՊԵ	450000	
1810002	Լոբեկտոմիա	ԴԵՊԵ	450000	
1810003	Վիրահատություններ միջևորմի վրա	ԴԵՊԵ	450000	
1810004	Երկխոռոչային էխինոկոկէկտոմիա	ԴԵՊԵ	450000	
1810005	Թոքի առիպիկ մասնահատում	ԴԵՊԵ	326250	
1810006	Կրծքային վիրահատություն՝ լիմֆադենէկտոմիա	ԴԵՊԵ	165000	
1810007	Կրծքային վիրահատություններ՝ լիմֆոդիոպսիա	ԴԵՊԵ	165000	
1810008	Կրծքային փոքր վիրահատություններ՝ կրծքավանդակի պատի ուռուցքների հեռացում առանց ընդհանուր անզգայացման	ԴԵՊԵ	125000	
1810009	Պլեյրալ խոռոչի դրենավորում	ԴԵՊԵ	70000	
1810010	Վիրահատություններ կրծքագեղձի վրա (սեկտորալ մասնահատում, կիսաթյի հեռացում և այլն)	ԴԵՊԵ	190000	
1810011	Մաստէկտոմիա	ԴԵՊԵ	320000	
1810012	Թոքի էխինոկոկի հեռացում	ԴԵՊԵ	320000	
1810013	Կրծքագեղձի երկկողմանի սեկտորալ մասնահատում	ԴԵՊԵ	285000	
1810014	Դադիկալ մաստէկտոմիա (անոթափոխային լիմֆոդիսեկցիայով) կամ կրծքավանդակի պատի ուռուցքների հեռացում կողերի մասնահատումով	ԴԵՊԵ	450000	
1810015	Սերմնալարի կիսաթյի հեռացում	ԴԵՊԵ	170000	
1810016	Օրխէկտոմիա	ԴԵՊԵ	170000	
1810017	Օրխէկտոմիա երկկողմանի	ԴԵՊԵ	170000	
1810018	Միզապարկի ուռուցքների ներմիզուկային մասնահատում	ԴԵՊԵ	195000	
1810019	Դադիկալ օրխոֆունկտէկտոմիա	ԴԵՊԵ	195000	
1810020	Առնանդամի ամպուտացիա	ԴԵՊԵ	195000	
1810021	Նեֆրէկտոմիա	ԴԵՊԵ	323000	
1810022	Շագանակագեղձի ադենոմայի տրանսուրետրալ հատում՝ անկախ եղանակից	ԴԵՊԵ	255000	
1810023	Բաց ադենոմէկտոմիա	ԴԵՊԵ	450000	
1810024	Դադիկալ նեֆրէկտոմիա չարորակ ուռուցքի կապակցությամբ	ԴԵՊԵ	450000	
1810025	Ադրենալէկտոմիա մակերիկամի ուռուցքի կամ այլ գոյացության հետ կապված (բաց կամ էնդոկրպիկ մեթոդով)	ԴԵՊԵ	487000	
1810026	Նեֆրոկտերէկտոմիա արդուիմալ մոնեցմամբ (երիկամի ավազանի և/կամ միզաձորանի ուռուցքի դեպքում, միզապարկի մասնահատմամբ կամ առանց)	ԴԵՊԵ	487000	
1810027	Դադիկալ ցիստէկտոմիա առանց վերականգնողական միջամտության՝ ուրետերոկլուտանեոտոմիա	ԴԵՊԵ	487000	
1810028	Դետորովայնամզային տարածության լիմֆոդիսեկցիա	ԴԵՊԵ	487000	
1810029	Դադիկալ պրոստատէկտոմիա	ԴԵՊԵ	626000	
1810030	Միզապարկի ռեկոնստրուկտիվ վիրահատություններ՝ տարբեր աղիքային սեզմենտներով	ԴԵՊԵ	626000	
1810031	Ռեկոնստրուկտիվ վիրահատություններ՝ միզանեռական օրգանների կազմավորում այլ հյուսվածքներով	ԴԵՊԵ	626000	
1810032	Ուռուցքի տրանսալ հեռացում	ԴԵՊԵ	160000	
1810033	Իլեո-կոլոստոմիայի ձևավորում	ԴԵՊԵ	255000	
1810034	Աղիների շրջանցող բերանակցում	ԴԵՊԵ	255000	
1810035	Կոլոտոմիա	ԴԵՊԵ	255000	
1810036	Խթաղու մասնահատում ստոմայով	ԴԵՊԵ	306000	
1810038	Ուղիղ աղու մասնահատում ստոմայով	ԴԵՊԵ	382000	
1810039	Ուղիղ աղու էքստիրպացիա	ԴԵՊԵ	382000	
1810040	Հաստ աղու ռեկոնստրուկտիվ վիրահատություններ	ԴԵՊԵ	382000	
1810041	Կոլպարկտէկտոմիա, համակցված վիրահատություններ	ԴԵՊԵ	382000	
1810042	Շրջանաձև կարող սարքի օգտագործմամբ ուղիղ աղու մասնահատում	ԴԵՊԵ	382000	
1810043	Ուղիղ աղու էքստիրպացիա	ԴԵՊԵ	382500	
1810044	Շրջանաձև կարող սարքի օգտագործմամբ կոլպարկտէկտոմիա, համակցված վիրահատություններ	ԴԵՊԵ	340000	
1810045	Պոլիպէկտոմիա ռեկտոկոպի միջոցով	ԴԵՊԵ	30000	
1810046	Հաստ աղու ռեկոնստրուկտիվ վիրահատություններ (առանց կարող գլխիկի արժեքի)	ԴԵՊԵ	382000	

1810047	Դեմքի կամ պարանոցի փափուկ հյուսվածքների ուռուցքների /3սմ-ից մեծ/ հեռացում	ԴեՊԶ	212000
1810048	Բայրորակ ուռուցքների, թաթաքային հիվանդությունների վիրահատական բուժում	ԴեՊԶ	255000
1810049	Թթազեղծի մասնահատում	ԴեՊԶ	150000
1810050	Թթազեղծի ամբողջական հեռացում	ԴեՊԶ	200000
1810051	Դարանոցի ավշային հանգույցների հեռացում միակողմանի	ԴեՊԶ	200000
1810052	Դարանոցի ավշային հանգույցների հեռացում երկկողմանի	ԴեՊԶ	280000
1810053	Քթի հարակից խոռոչների ուռուցքների հեռացում	ԴեՊԶ	280000
1810054	Ըմպանի ուռուցքի հեռացում բերանի խոռոչից (տեղային անզգայացմամբ)	ԴեՊԶ	105000
1810055	Ըմպանի ուռուցքի հեռացում բերանի խոռոչից (ընդհանուր անզգայացմամբ)	ԴեՊԶ	135000
1810056	Ըմպանի ուռուցքի հեռացում ֆարինգոտոմիայով	ԴեՊԶ	255000
1810057	Կոկորդի ուռուցքի հեռացում (տեղային անզգայացմամբ)	ԴեՊԶ	105000
1810058	Կոկորդի ուռուցքի հեռացում (ընդհանուր անզգայացմամբ)	ԴեՊԶ	135000
1810059	Կոկորդի մասնահատում լարինգոտոմիայի ձևավորմամբ	ԴեՊԶ	297000
1810060	Ըմպանի չարորակ ուռուցքների հեռացում	ԴեՊԶ	255000
1810061	Կոկորդի մասնահատում և պարանոցի միակողմանի լիմֆոդիսեկցիա	ԴեՊԶ	297000
1810062	Կոկորդի մասնահատում և պարանոցի երկկողմանի լիմֆոդիսեկցիա	ԴեՊԶ	350000
1810063	Ֆարինգո-լարինգոտոմիայի պլաստիկ մաշկամկանային լարով	ԴեՊԶ	272000
1810064	Դարանոցի միջային կամ կողմնային կիստայի հեռացում (ընդհանուր անզգայացմամբ)	ԴեՊԶ	190000
1810065	Բիմաթիվյար օտոնոտոմիա աուտոտրանսպլանտատի կիրառմամբ	ԴեՊԶ	300000
1810066	Լյարդի էխինոկոկի հեռացում	ԴեՊԶ	238000
1810067	Լյարդի էխինոկոկի հեռացում լապարասկոպիկ	ԴեՊԶ	250000
1810070	Փայծախի հեռացում	ԴեՊԶ	300000
1810071	Վիրահատություններ խոլեդոխի վրա	ԴեՊԶ	382000
1810072	Կարդիոպլաստիկա	ԴեՊԶ	297000
1810073	Կերակրափողի մասնահատում	ԴեՊԶ	510000
1810074	Կերակրափողի ենթամարդոջական մասնահատում՝ պլաստիկայով	ԴեՊԶ	722000
1810075	Վիրահատություններ ստամոքսի ուռուցքային պաթոլոգիաների դեպքում	ԴեՊԶ	340000
1810076	Գաստրէկտոմիա	ԴեՊԶ	470000
1810077	Ենթաստամոքսային գեղձի բշտի ներքին դոնեակորում կամ հեռացում	ԴեՊԶ	340000
1810078	Ենթաստամոքսային գեղձի դիստալ մասնահատում	ԴեՊԶ	382000
1810079	Դանկերեստոդոդոնեալ մասնահատում (ԴՊԶ, ԴՊԶ)	ԴեՊԶ	750000
1810080	Չետորովայնաձային ոչ օրգանային ուռուցքների հեռացում	ԴեՊԶ	300000
1810081	Մեծ ճարպոյի հեռացում	ԴեՊԶ	210000
1810082	Փոքրածակալ ուռուցքների հեռացում (տեղային անզգայացմամբ)	ԴեՊԶ	76000
1810083	Փոքրածակալ ուռուցքների հեռացում (ընդհանուր անզգայացմամբ)	ԴեՊԶ	120000
1810084	Վիրահատություններ աղիների ուռուցքային պաթոլոգիաների դեպքում	ԴեՊԶ	297000
1810085	Վիրահատություններ աղիների օջախային պաթոլոգիաների ժամանակ	ԴեՊԶ	229000
1810086	Վիրահատություններ լյարդի օջախային պաթոլոգիաների ժամանակ	ԴեՊԶ	229000
1810087	Վիրահատություններ փայծախի օջախային պաթոլոգիաների ժամանակ	ԴեՊԶ	229000
1810088	Ստրումէկտոմիա միջին ծավալ	ԴեՊԶ	225000
1810089	Ստրումէկտոմիա մեծ ծավալ	ԴեՊԶ	300000
1810090	Ստրումէկտոմիա ռադիկալ լիմֆոդիսեկցիայով մեծ ծավալ	ԴեՊԶ	400000
1810091	Մակերիկամի ուռուցքի հեռացում	ԴեՊԶ	340000
1810092	Ստրումէկտոմիա փոքր ծավալ	ԴեՊԶ	155000
1810093	Կոնք-ազդրային հոդի, ծնկահոդի, ռսաահոդի և սրունք-թաթային հոդի ախտորոշիչ արթրոսկոպիա	ԴեՊԶ	160000
1810094	Մատնեղի դեֆորմացիաների ուղղում, արթրոլիզ, արթրոդեզ, Iº բարդության մկանաջլային վիրահատություններ, ոսկրային և փափուկ հյուսվածքների ոչ մեծ նորագոյացություններ	ԴեՊԶ	144000
1810095	Մատնեղի դեֆորմացիաների ուղղում, արթրոլիզ, արթրոդեզ, IIº բարդության մկանաջլային վիրահատություններ, ոսկրային և փափուկ հյուսվածքների նորագոյացություններ	ԴեՊԶ	242000
1810096	Ուղղիչ ոսկրահատումներ, ոչ ճիշտ սերտաճած և չսերտաճած կոտրվածքների բարդ ռեկոնստրուկտիվ վիրահատական բուժում, ոսկրային և մկանա-ջլային պլաստիկաներ, Hallux Valgus IIIº բարդության ոսկրային և փափուկ հյուսվածքային տարածուն նորագոյացություն	ԴեՊԶ	250000
1810097	IVº բարդության ռեկոնստրուկտիվ վերականգնողական վիրահատական բուժում	ԴեՊԶ	450000
1810098	Ուղղիչ ոսկրահատումներ, 1 ոսկրի ոչ ճիշտ սերտաճած և չսերտաճած կոտրվածքների, բնական և ձեռքբերովի արատների ու բարդությունների (I- IIº բարդության) վիրահատական բուժում, ոսկրային և փափուկ հյուսվածքային ոչ մեծ նորագոյացություններ	ԴեՊԶ	242000
1810099	Ուղղիչ ոսկրահատումներ 1 ոսկրի ոչ ճիշտ սերտաճած և չսերտաճած կոտրվածքների, բնական և ձեռքբերովի արատների ու բարդությունների (IIIº բարդության) վիրահատական բուժում, ոսկրային և մկանա-ջլային պլաստիկա, ոսկրային և փափուկ հյուսվածքային նորագոյացություններ	ԴեՊԶ	408000
1810100	Խոշոր հոդերի (կ/ա, ծնկահոդ, ա/թ հոդ, ռսաահոդ, արմկահոդ) տոտալ էնդոպրոթեզավորում / ռեկոնստրուկցիայով, առանց էնդոպրոթեզի արժեքի/	ԴեՊԶ	550000
1810101	Խոշոր հոդերի (կ/ա, ծնկահոդ, ա/թ հոդ, ռսաահոդ, արմկահոդ) տոտալ էնդոպրոթեզավորում/առանց ռեկոնստրուկցիայի, առանց էնդոպրոթեզի արժեքի/	ԴեՊԶ	420000
1810102	Դաստակի, նախադաստակի, զարչապարի, նախազարչապարի և միջֆալանգային հոդային ամպլուտացիա ընդհանուր անզգայացումով	ԴեՊԶ	127000
1810103	Նախաբազկի կամ սրունքի շրջանի ամպլուտացիա	ԴեՊԶ	250000
1810104	Բազկի կամ ազդրի շրջանի ամպլուտացիա	ԴեՊԶ	330000
1810105	Կոնք-ազդրային հոդի էկզարտիկուլյացիա	ԴեՊԶ	450000
1810107	Շյուղեր և պտուտակներ մեկ հատվածի համար (մեկ միավորը)	ՄԻՎՎՈՐ	21000
1810108	Փոքր մետաղական կոնստրուկցիաներ՝ պճեղի հարթակ, նախաբազկի հարթակ, անոսիի հարթակ (յուրաքանչյուրի համար)	ՄԻՎՎՈՐ	170000
1810109	Միջին մետաղական կոնստրուկցիաներ՝ մեծ ոլոքի հարթակ, բազկոսկրի ոսկրերի հարթակ (յուրաքանչյուրի համար)	ՄԻՎՎՈՐ	220000
1810110	Մեծ մետաղական կոնստրուկցիաներ՝ ազդրի հարթակ, բազկի մեխ, սրունքի մեխ, ազդրի մեխ (յուրաքանչյուրի համար)	ՄԻՎՎՈՐ	270000
1810111	Եղջի և/կամ հեշտոցի պատերի բարորակ նորագոյացությունների հեռացում; արգանդի պարանոցի ամպլուտացիա, էնդոկրոնիզացիա; ռեզեկտոմիա սերոսկոպիա	ԴեՊԶ	100000
1810112	Չեշտոցի միջնազատի հատում; բարոդինյան գեղձի կիստայի հեռացում	ԴեՊԶ	114000
1810113	Կոնսերվատիվ միոմէկտոմիա	ԴեՊԶ	220000
1810114	Սուբտոտալ արքոմիալ հիստերէկտոմիա; սալպինգէկտոմիա; օվարիէկտոմիա; ադնեքսէկտոմիա (բորբոքային ուռուցքների դեպքում); ձվարանի կիստայի և/կամ կիստոմաների հեռացում	ԴեՊԶ	230000
1810115	Վազինալ հիստերէկտոմիա; Մանյեստերյան վիրահատություն	ԴեՊԶ	270000
1810116	Տոտալ արքոմիալ հիստերէկտոմիա; Վազինալ հիստերէկտոմիա տրիպլեքս; վիրահատություն պոստիստերէկտոմիալ պրոլապտոսի դեպքում	ԴեՊԶ	300000
1810117	Տոտալ լապարոսկոպիկ հիստերէկտոմիա; կոպիտիստերէկտոմիա; ռեկտո-վազինալ տարածքի դրոկալանագի լապարոսկոպիկ հեռացում;	ԴեՊԶ	280000
1810118	Տոտալ արքոմիալ հիստերէկտոմիա	ԴեՊԶ	331000
1810119	Տոտալ արքոմիալ հիստերէկտոմիա հարակից օրգանների վրա ուռուցքի տարածմամբ	ԴեՊԶ	331000
1810119	Դանիստերէկտոմիա իլեո-պարասարդոս լիմֆոդիսեկցիայով; Լայնացված վուլվէկտոմիա անոկա-իլեոկալ լիմֆոդիսեկցիայով	ԴեՊԶ	331000
1810120	Տոտալ արքոմիալ հիստերէկտոմիա TOT-ով; վազինալ հիստերէկտոմիա լապարոսկոպիկ ադիստենցիայով (LAVH) TOT-ով; Վազինալ հիստերէկտոմիա տրիպլեքս TOT-ով; վիրահատություն պրոիստերէկտոմիա պրոլապտոսի դեպքում TOT-ով	ԴեՊԶ	331000
1810121	Ձվարանների չարորակ ուռուցքների հեռացում	ԴեՊԶ	331000
1810122	Մճուկա-ազդրային լիմֆոդիսեկցիա միակողմանի	ԴեՊԶ	255000
1810123	Մճուկա-ազդրային լիմֆոդիսեկցիա երկկողմանի	ԴեՊԶ	382000
1810124	Վրճանդի վզիկի կրիոդեստրուկցիա ներերակային անզգայացումով	ԴեՊԶ	110500
1810125	Նյարդավիրաբուժական փոքր ծավալի վիրահատություններ	ԴեՊԶ	200000
1810126	Գանգի ոսկրային դեֆեկտների կրանիոպլաստիկա տարբեր նյութերով	ԴեՊԶ	400000

1810127	Գանգի ոսկրային ուռուցքների հեռացում	Դեղք	350000	
1810128	Դեկոմպրեսիոն տրեպանացիա	Դեղք	350000	
